




Աբաղաղներու կոխ.

Ն Ա Մ Ա Կ Ա Ռ Ի Մ Բ Ա Գ Ի Ր Ս.

Նիկոմիդիայի քով Սալանպէկ գեղաքաղաքէն ձիովէնեան Պ. Արմենակը գիր մը կգրէ մեզի, զոր արժան կհամարիմք ամբողջ հրատարակել:

Ինչ գանգատ որ կրնէ այն ընթերցասէր գրագետը իւր թղթին մէջ, եւ իրեն հետ ուրիշները, յուսամք թէ Մասեաց Աղաւնոյն եւս նոյնպէս չյարմարի՝ ինչպէս որ թերեւս յարմար կարծուի քանի մը լրագրաց եւ օրագրաց: Այսու ամենայնիւ մեր Աղաւնին ալ այս ազ-

դարարութենէն իւր բաժինը սիրով կընդունի, վասնզի արդէն միտքը դրած է այսուհետեւ աւելի կանոնաւոր կերպով, եւ աւելի անընդհատ կարգով հասնիլ իւր բաժանորդաց ձեռքը. մանաւանդ որ Տաճկաստանի Գործակալներէն նոր նոր խոստմունք առած է ճշդութեան եւ հոգացողութեան, եւ Ռուսաստանի բաժանորդացը ուղղակի պիտի երթայ՝ հասարակ նամակի պէս՝ տէրութեան թղթատարաց ձեռքովը:

„1860. օգոստոսի 10, Ասլանակի :

„Պատուական Խմբագիր .

„Լաւ ճանչնալով ձեր վնասն ազատամտութիւնը, կը համարձակիմ այս անգամ երկտող գրութեամբ խնդրել ձեր ազգասիրութենէն՝ որ բարենաձիք նետեալս համառօտ դիտողութիւնս հրատարակել ձեր պատուական Լրագրոյ մէջ, յօգուտ միանգամայն խմբագրաց եւ հասարակութեան :

„Քիչ անգամ ընդ կարողացած գանգաւ օրագրաց մէջ այնպիսի գանգատներ՝ որ ուղղեալ են Ազգին հասարակութեանը . բայց մեք հոս շատ մը գանգատներէն երկուքը միայն ընտրեմք, եւ անոնց վրայ ըստ մեր կարեաց քանի մը դիտողութիւն ընեմք :

Ա. Ինչո՞ւ համար լրագրաց եւ օրագրաց բաժանորդները չեն շատնար :

Բ. Ինչո՞ւ համար բաժանորդաց մեծ մասը, մանաւանդ զրոյի բաժանորդները, իրենց բաժանորդութեան զինք կանխիկ չեն վճարեր, եւ կամ գոե՞ տարւոյն վերջը :

„Այս երկու գանգատներուն վրայ մեր դիտողութիւնը այս է, քէ խմբագիրք որքան որ պատճառ եւ իրաւունք ունին այս գանգատներն ընելու, նոյնպէս հասարակութիւնը իրաւունք ունի անոնց գանգատները չլսելու . որովհետեւ այս երկու դժնդակ չարեաց զխառն փառաւոր պատճառը խմբագրաց կողմանէ է, եւ բաժանորդը յայտ մասին կամ բոլորովին անպարտ են, եւ կամ քիչ յանցանք ունին, մէկդի առնելով այն մէկ քանի անձինքը՝ որոնք *Մեղուին* տարեկան զինք կանխիկ տրուելուն համար՝ քիչ կմնայ իրենց գանձապետը ծեծեն եւ վռնեն : Այս մեր խօսքը հաստատելու համար շատ նեղութիւն չունիմք քաշելիք, եւ ահա զխառն ապացոյցը՝ որով կիմացուի քէ բաժանորդը այս մասին մէջ անմոլ են . . . Խմբագիրները մասնաւոր հոգ չունին որ իրենց բերքերը ժամանակին բաժանորդաց ձեռքը հասնի . ուստի եւ տարաբաղ ղ բաժանորդները, մանաւանդ Պօլիսէն դուրս բնակողները, գրեթէ միշտ կզրկուին իրենց բաժանորդական իրաւունքէն, կամ յուլիսի 20 քիւ ունեցող քերքը հոկտեմբերի 6-ին ձեռք անցնելով, եւ կամ մէկ տարիին մէջ հագիւ իւր ստանալիք բերքերուն մէկ չորրորդը ձեռք անցնելով, անոնց վրայ ալ օրագրի կամ լրագրի երես չըմնալով : Արդ քանի որ այս ցաւալի դեպքին կացութիւնը այս է, եւ իրողութիւնը յայտնապէս կցուցրէ քէ բաժանորդք օրագրաց եւ լրագրաց՝ երբեք զո՞ չեն խմբագիրներէն, եւ կրած զրկանքնին անտանելի է, ո՞ր անաչառ միտք կրնայ իրաւունք չտալ հասարակութեան որ նախ՝ բաժանորդ չգրուին օրագրաց եւ լրագրաց . երկրորդ՝ կանխիկ չվճարեն անոնք որ բաժանորդ կզրկուին . երրորդ՝ ընաւ չվճարեն անոնք որ իրենց իրաւունքը եղած բերքերը կամ տարածած կընդունին կամ կիսակատար . եւ չորրորդ՝ դադարին բաժանորդութենէ անոնք որ այսպիսի զրկանաց տակ ընկած են :

„Ո՞րքան մեծ իրաւունք ունին այսպիսի տարաբաղ ղ բաժանորդները՝ որ ուզեն քէ ընաւ օրագիր կամ լրագիր չհրատարակուէր, եւ կամ գէթ իրենց սիրտը չվշտանար այսպիսի զրկանաց հանդիպելով . քանինքն կան որ ակնապիշ կապասն իրենց սեպական բերքերուն, եւ սրտերնին որքան կմաշուի՝ երբ օրեր՝ ամիսներ սպասելին վերջը՝ ձեռքերնին կէս պատռած՝ կէս մրոտած բերք մը կանցնի, եւ անկեց կիմանան քէ „երեք ամիս ու կէս առաջ երեք ազգային ժողով լինելով՝ որոշուեցաւ որ ասկեց վերջը ազգին ամէն մէկ անհատները (այս ինչ) իրաւունքը ունին“, եւ այլն, եւ այլն : Խիտո հաճելի բան չէ դեպք կամ անցք մը, քէ ազգային եւ քի բաղադրական, պատահած կամ հրատարակուած օրէն ամիս մը, երկու, երեք, եւ երբեմն ալ եօթը ամիս վերջը լսելը : — Խմբագրական այսպիսի ապօրինաւոր ընթացքին դեմ բաժանորդ մը ինչ որ ըսէ՝ տեղն

է, եւ հասարակութեանը օրագրի մը կամ բաժանորդ լինել չուզելը, լինել եւ զինք կանխիկ վճարել չուզելը, եւ վերջերեալ զրկանաց պատճառաւ ընաւ տարեկան բաժանորդական զինք վճարել չուզելը՝ ապօրինաւոր չէ . եւ խմբագիրք քանի որ այս անտանելի չարեաց՝ առջեւն առնելու ջանք չունին, իրաւունք ալ չեն ունենար գանգատ ընելու քէ ինչո՞ւ բաժանորդնին չաւելնար, ինչո՞ւ կպակսին, ինչո՞ւ բաժանորդութեան զինք կամ կանխիկ եւ կամ տարւոյն վերջը չեն վճարեր : Թող խմբագիրք այս չարեաց առջեւն առնեն, եւ ապա վստահ ըող լինին որ բաժանորդնին պիտի շատնայ, եւ իրենց ստանալու զինք ալ պիտի ընդունին, առանց ամենեւին զրկանք մը կրելու : Ահա այն ատենը իրենց մինչեւ հիմա ըրած գանգատները կվերնան . ոչ իրենց խմբագրական իրաւունքն կզրկուին, եւ ոչ բաժանորդք կըրնան համարձակիլ նոցա իրաւանց համեմատ չվարուելու : Բայց քանի որ խմբագիրք այս բանիս առջեւն չեն կրնար առնուլ, բող ընաւ չլուսան ալ որ նախ՝ պիտի յառաջանան իրենց սաշտօնին մէջ, եւ երկրորդ՝ պիտի կարենան շարունակ ձեռք անցընել իրենց իրաւունքը :

„Արդ կխնդրուի ամէն խմբագիրներէն որ բարենաձիք բաժանորդներին զո՞ ընելու՝ անոնց հասցընելով իրենց բերքերը . ա, օրինաւոր ժամանակաւ . բ, առանց պատահուած լինելու . գ, առանց մէկ հատ մը պակսելու : Ահա ասոնք են բաժանորդաց իրաւունքը զոր կխնդրեն խմբագիրներէն . եւ խմբագիրք երբ կուզեն որ իրենց բաժանորդաց զրկանք չընեն, խմբագրութեան մէջ յառաջանան եւ իրենց իրաւունքն չզրկուին, բող իրենց առաջին գործը լինի բաժանորդներուն իրաւունքը տեղը տանիլ, եւ անոնց սիրտը մխիթարել : Այս ընելը խմբագիրներուն պարտքն է, եւ հասարակութիւնը մեծ յուսով կսպասէ անոր կատարմանը :

„Պատուական խմբագիրներ, ներեցէք ինձ իմացընել ձեզ, որ այս յօդուածը հրատարակելու ատեն մեր գլխաւոր դիտաւորութիւնը զննչ պարտաւել չէ, այլ ձեզի իմացընել որ ձեր բաժանորդները, մասնաւոր զրոյի քաղաքներունը, այսպիսի դժնդակ զրկանաց մէջ են, կարելի է առանց ձեր գիտութեանը . եւ ահա այս բանիս բոլոր նիկոմիդիա, Պարտիզակ, Արմաշ, Ատարազար, Ասլանակ, Օվաճրք եւ ուրիշ շատ զիւղեր եւ գիւղաքաղաքներ ինձ հետ կվկայեն . շատ պատուաւոր անձինք վշտացեր են այս մասին, եւ միակամ են ինձ հետ խնդրելու ձեզմէ որ այս չարեաց առջեւն առնուէք, եւ ձեր բաժանորդները զո՞ ընէք :

„Ազգասէր խմբագիրք, ձեր բաժանորդները չեն պահանջեր որ իրենց բերքերը Պօլիս տեսնուած օրերին իրենց ձեռքն ալ անցնի . այլ իրենց խնդիրքն է որ օրինաւոր ժամանակաւ հասնի իրենց ձեռքը, այսինքն նկատմամբ իրենց գտնուած տեղին հեռաւորութեանը Պօլիսէն՝ վերոյիշեալ գիւղերն ու գիւղաքաղաքները զո՞ պիտի լինին, երբ իրենց բերքերը անոնց Պօլսոյ մէջ տեսնուած օրէն երեք օր ետքը իրենց հասնին . քէ եւ անհար չէ ամենեւին, այլ շատ զիւրին է որ երկու օրէն լինի, որովհետեւ նիկոմիդիան միայն եօթը ժամ հեռու է Պօլիսէն, եւ ամէն օր շոգեմաւ կրանի . իսկ միւս գիւղերը 4-էն մինչեւ 7 ժամ միայն հեռու են նիկոմիդիայէն, եւ ամէն օր եկող գնացող կատնուի, որոնք շատ սիրով օրագիրները իրենց տեղերուն կտանին : Կխնդրեմք որեմն, ազգասէր խմբագիրներ, որ բարենաձիք այս մասին անվոյք չլինել :

„Երբ ուզենք՝ կրնայինք անրիւ օրինակներ յառաջ ընել այս բանիս . բայց չուզելով որ մասնաւոր խմբագրաց անուր տուած լինիմք, առ այժմ խոհեմութիւն սեպեցինք գանոնք չլինել, յուսալով որ մեր խնդիրը կկատարուի, եւ ուրիշ ատեն հարկ չլինիր այսպիսի յօդուած մը հրատարակելը :

Մնամ, եւ այլն.

Արմենակ Հ. ձիգովեան.